



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.
ԲԱՆԱԿԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«16» 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000028

Ձեռնարկողը՝

«Էյ Թի Էմ Էս Սույուշնս» ՍՊԸ
Ք. Երևան, վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«Հայաստան էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արեշ-2»
110/35/10 ԿՎ Ենթակայանի յուղահեռացման համակարգի
վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայր
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔԵՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀՐԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔԵՆԱԾՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 000028

<<16>> 05 2019թ.

**<<Հայաստան Էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի <<ԱրԵշ-2>> 110/35/10
ԿՎ Ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Արցախի
5-րդ նրբանցք

<<ԱրԵշ-2>> 110/35/10 ԿՎ Ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Էրեբունի վարչական շրջանում՝ <<ԱրԵշ-2>> 110/35/10 ԿՎ Ենթակայանի տարածքում։ Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 949869 վկայականի համաձայն Ենթակայանի հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, օգտագործման նպատակը՝ Ենթակայանի սպասարկման համար։

Գործունեության նպատակն է՝ վերակառուցել Ենթակայանի տրանսֆորմատորներից արտահոսած յուղերի հավաքման և կուտակման (յուղահեռացման) համակարգը, որն իր մեջ ներառում է յուղընդունիչներ, յուղահեռացուցիչ և յուղահավաք։ Վերակառուցումը նպաստելու է վթարների և հրդեհների կանխարգելմանը, դրանց առաջացման դեպքում ապահովելու է տրանսֆորմատորներում առկա յուղերի կազմակերպված հոսքը և կուտակումը՝ յուղահավաքում։

Համաձայն նախնական գնահատման հայտի <<ԱրԵշ-2>> 110/35/10 ԿՎ Ենթակայանում տեղադրված S1 և S2 տրանսֆորմատորների յուղահեռացման համակարգը գրեթե չի գործում։ Նախնական հայտով նախատեսվում է յուղընդունիչների վերակառուցում, յուղահեռացուցչի (փակ կոյուղագիծ) և յուղահավաքի կառուցում։ Յուղահավաքը լինելու է $6.25 \times 3.25 \times 3.45$ մ առանցքային չափերի և 70m^3 ծավալով ստորգետնյա, միաձոյլ երեսաբանության առողջությունը։ Այն հաշվարկված է ամենաշատ ծավալի յուղ պարունակող մեկ տրանսֆորմատորից արտահոսող առավելագույն յուղի (100%) ծավալի և հրդեհամարման համար անհամանավար ծավալի (20%) հավաքման չափով։ Յուղընդունիչների վերակառուցելուց, յուղահեռացուցիչը Ալումինիավաքը



կառուցելուց հետո, նախքան գրունտի հետիցը, յուղահավաքը փորձարկվելու է ոռոգման ջրով: Վերակառուցված համակարգի արդյունքում վթարված տրանսֆորմատորներից արտահոսող յուղը թափվելու է յուղընդունիչներ, փակ ստորգետնյա պողպատե խողովակով (յուղահեռացուցիչ) ինքնահոս տեղափոխվելու է դեպի յուղահավաք: Յուղահեռացուցիչ խողովակների հատվածներում տեղադրվելու են միաձոյլ երկաթբետոնե դիտահորեր:

Նախնական գնահատման հայտով ենթակայանի յուղահեռացման համակարգի վերակառուցումը կատարվելու է 40 օրում, 4 հաջորդական փուլերով՝ քանդոմ, յուղընդունիչների վերակառուցում, յուղահեռացուցիչ և յուղահավաքի կառուցում:

Աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է օգտագործել տեխնիկական միջոցներ՝ ավտոամբարձիչ, բեռնատար մեքենա, էքսկավատոր, բետոնախանիչ: Հողային աշխատանքների որոշ մասը կատարվելու է ձեռքով: Քանդման և վերանորոգման փուլերում առաջանալու են կենցաղային և շինարարական՝ վտանգավորության 4-րդ և 5-րդ դասերին համապատասխան թափոններ.

- յուղընդունիչի հավաքովի բետոնե եզրաքարերի և հիմքի քանդվածք շինարարական աղբի տեսքով (20,5տ), որը տեղափոխվելու է Աջափնյակի շինարարական թափոնների աղբավայր,

- սև մետաղի ջարդոն(0,7 տ), որն իրացվելու է համապատասխան մասնագիտական ընկերությունների կողմից,

- փորման արդյունքում առաջացած գրունտ, հողային հանվածքի տեսքով (103,4 մ³, որն օգտագործվելու է այլ ենթակայանում որպես հետիցը,

- յուղոտված լաթեր(0,01տ)՝ 1/10 հարաբերությամբ խառնվելու է առաջացած կենցաղային աղբին և տեղափոխվելու է քաղաքային աղբավայր,

- կենցաղային չտեսակավորված աղբ(0,1տ), որը տեղափոխվելու է քաղաքային աղբավայր:

Նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ է կատարել 458.5 մ³ ծավալով փորման աշխատանքներ, որից 355.1 մ³ հողն օգտագործվելու է փորված հատվածների հետլցման և տարածքների հարթեցման համար: 103.4 մ³-ը հողը ծածկված վիճակում պահվելու է ենթակայանի հարկանությամբ, հետագայում տեղափոխվելու է այլ ենթակայանի տարածք, որպես լիցը օգտագործելու նպատակով: Հետլցման համար նախատեսված հողային ծավալի 1.2 մ³-ը բուսահող է, որը ենթակայանի տարածքում համապատասխան պայմաններում պահպանվելուց հետո, օգտագործվելու է որպես յուղընդունիչների հարակից տարածքների հարթեցված մակերեսների վերին շերտ: Հետլցը համար օգտագործվելու է նաև յուղընդունիչների խիճը (81.2 մ³):

Շինարարական և վերանորոգման աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից ջուր՝ տարածքների ջրանի, հողի (գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների և յուղահեռացման համակարգի փորձարկման համար: Ջրանի (9մ³) և յուղահեռացման համակարգի փորձարկման համար (20մ³) ջուրը վերցվելու է ենթակայանի կանաչ գոտիների որոգման ջրահամակարգից՝ <<ԷՅ>> ՓԲԸ-ի և <<Վեոլիա>> ՓԲԸ-ի միջև գործող պայմանգրի համաձայն:

Նախատեսվող գործունեության իրականացման վերջին փուլում կատարվելու է տարածքի հարթեցում և բարեկարգում: Հատուկ կանաչապատման աշխատանքներ չեն իրականացվելու, քանի որ շոգ եղանակներին բուսածածկույթը կարող է հրդեհների տարածման պատճառ դառնալ:



Յուղահեռացման համակարգի շահագործման փուլում, հնարավոր վթարների դեպքում առաջանալու է յուղահավաքում կուտակվող տրանսֆորմատուային յուղ՝ պոլիօլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող (3-րդ դաս) կամ պոլիօլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ պարունակող (1-ին դաս) թափոններ: Պոլիօլորացված դիֆենիլների պարունակությունը որոշելու համար, մինչև ենթակայանի տարածքից յուղի տեղափոխելը կատարվելու է տրանսֆորմատորային յուղի նմուշի քիմիական անալիզ: Կախված անալիզի արդյունքից, պոլիօլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակելու դեպքում, յուղահավաքում կուտակված տրանսֆորմատորային յուղը <<ԷՅ>> ՓԲԸ-ի մասնագիտացված կապալառո՛ <<Էներգանորոգում>> ԲԲԸ-ի կողմից պոմպահանվելու և ավտոցիստեռնով տեղափոխվելու է յուղագտիչ կայան՝ զտման և վերարտադրման նպատակով: Պոլիօլորացված դիֆենիլների թույլատրելի (50րրո) մեծությունից ավել պարունակելու դեպքում թափոնները չեն վերամշակվելու, այլ ուղարկվելու են <<ԷՅ>> ՓԲԸ-ի թափոնների պահման տեղամաս՝ հետագա ոչնչացման նպատակով: Պոլիօլորացված դիֆենիլներ պարունակելու դեպքում յուղոտված լաթերը ևս տեղափոխվելու են <<ԷՅ>> ՓԲԸ-ի թափոնների պահման տեղամաս՝ հետագա ոչնչացման նպատակով:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է ենթակայանի արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացության ազդեցություններ: Ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների, թափոնների տեղափոխման, հակայուղային ներկերի, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության հետ, որոնք շրջակա միջավայրի վրա կունենան նվազագույն և կարճաժողոված ազդեցություններ՝ թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է օդային ավազանի, հողային ուսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ուսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

- տարածքում աղբի, շինարարական նյութերի և թափոնների բաց այրման արգելում,
- փոշու արտանետման նվազեցման նպատակով՝ հողի և այլ շինանյութերի տեղափոխում՝ ծածկված թափքով մեքենաներով,
- հողաբուսաշերտի պահպանում՝ <<կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- շինանյութերի, գրունտի և բռաահողի ծածկում՝ ջրադիմացկուն թաղանթով,
- յուղընդունիչների խճի պահում ծածկի տակ՝ ՊԿՔ պարկերում,
- օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում,
- յուղի արտահոսքը կանխելու համար՝ շինարարական տեխնիկայի սպասարկում մասնագիտացված կետերում,

- հողային ուսուրսներն աղտոտումից պահպաններու համար՝ յուղի և տեղումային ջրերի պոմպահանման աշխատանքների ժամանակ հատուկ պաշտպանիչ տակդիրների կիրառում և այլն:

Փորձաքննական եզրահանգումներ. հայտի փորձաքննական գործությացին մասնակցել է բնապահպանության նախարարության ստորաբաժանությունը: Օնենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են համարային քննուկումներ, որի



ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա նվազագույն և կարճատև ազդեցություն, կնպաստի ենթակայանում հնարավոր բռնկումների, հրդեհների կանխարգելմանը և շրջակա միջավայրի պահպանմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամերին՝ բնակելի տարածքներում աղմուկից և ճանապարհների բեռնվածության ավելացումից խուսափելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սովորական>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում՝ <<Արեգ-2>> 110/35/10 ԿՎ Ենթակայանի տարածքում նախատեսվող յուղահեռացման համակարգի վերակառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եղակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ

Թ. Նուրիջանյան



